ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՈՎ ԳՈՐԾԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երեւան 1 մարտի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Պողոսյանի
Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Ա. Պետրոսյանի

Ուսումնասիրելով քաղաքացիներ Իրինա Օգանեզովայի, Աննա եւ Ագնեսա Բաղդասարյանների անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացիներ Իրինա Օգանեզովան, Աննա եւ Ագնեսա Բաղդասարյանները դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ, 19-րդ եւ 42-րդ հոդվածների պահանջներին եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 6-րդ, 18-րդ եւ 19-րդ հոդվածների պահանջներին:

Դատական կազմը, ելնելով տվյալ անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներից, գտնում է, որ անհատական դիմումը մասամբ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասի առումով, ակնհայտ անհիմն է, քանի որ այդ դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը դիմողն իրավաբանորեն չի հիմնավորել, ինչը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի իմպերատիվ պահանջն է:

Բացի այդ, դատական կազմն արձանագրում է, որ վիճարկվող դրույթի սահմանադրականությունը չի կարող գնահատվել այլ դրույթներից մեկուսացած, հետեւաբար՝ այն պետք է դիտարկել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի այլ դրույթների հետ համակարգային վերլուծության արդյունքում: Հետեւաբար, ելնելով վերոգրյալից՝ դատական կազմը գտնում է, որ վիճարկվող դրույթն իր բովանդակությամբ սահմանադրաիրավական վեճ չի առաջացնում եւ առկա է այս առումով գործի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված հիմք:

Դատական կազմը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի մասով անհատական դիմումը պետք է ընդունել քննության, քանի որ անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ դիմողները պահպանել են ՀՀ սահմանադրական դատարան դիմելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանված պայմանները, այն է՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31, 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Յ.

1. Քաղաքացիներ Իրինա Օգանեզովայի, Աննա եւ Ագնեսա Բաղդասարյանների անհատական դիմումով գործի քննության ընդունումը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասի առումով, մերժել:

2. Նույն անհատական դիմումով գործը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի մասով, ընդունել քննության:

3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

1 մարտի 2011 թվականի
ՍԴԴԿՈ/1-4